ԳՈՀԱՐ ԿԱՌԼԵՆԻ ՇԱԳՈՅԱՆ

Երաժշտագետ, «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադիր-գլխավոր խմբագիր, հրատարակիչ
E-mail: gkshagoyan@gmail.com

«Երաժշտական Հայաստան»ամսագրի ստեղծման 25-ամյակը

100-ամյա կոնսերվատորիայում, 25 տարի առաջ ստեղծվեց «Երաժշտական Հայաստան» ամսագիրը: Այն երաժշտագիտական մտքի գիտատեսական, քննադատական-հրապարակախոսական երաժշտական ամսագիր է, արտահայտությունն է և արժեքավոր ներդրում դարձավ երաժշտագիտության և երաժշտական կյանքի լուսաբանման գործում: Ամսագիրն արտացոլում է ոչ միայն Հայաստանի, այլև Սփյուռքի երաժշտական կյանքը: Ամսագրի առաջին համարն ստեղծվել է 1996 թվականին, կոնսերվատորիայի հիմնադրման 75-ամյա հոբելյանին, այդ տարիների ռեկտոր, պրոֆեսոր՝ Արմեն Սմբատյանի գործուն նախաձեռնությամբ և տողերիս հեղինակի: Ըստ էության կոնսերվատորիայի հոբելյանը խթան հանդիսացավ ամսագրի նախաձեռնման համար:

Կոնսերվատորիայում, գիտական պարբերական ամսագիր հիմնադրելը և ավելի քան 25 տարի շարունակականությունն ապահովելը մեծ ջանքեր է պահանջում, քանի որ այն և՛ հանրապետական, և՛ համահայկական երաժշտական մշակութային նշանակություն ունի: Ամբողջ երաժշտական կյանքը պտտվում է կոնսերվատորիայի շուրջ, բնականաբար ամսագիրն էլ ստեղծվեց հենց այստեղ:

Ամսագիրն անցել է բավականին բարդ ուղի: Այն հիմնադրվեց ՀՀ մամուլի օրենքի ընդունումից (2004 թվականից) շատ ավելի առաջ, երբ գործում էին Խորհրդային օրենքներ, որոնք անհրաժեշտ էր հաղթահարել: Հարկավոր էր՝ Կրթության նախարարության Գիտական մեթոդ կաբինետից ստանալ թույլտվություն և երաշխավորություն, որպեսզի այդ իսկ կառույցի հրատարակչություն-տպարանում լույս ընծայվեր ամսագիրը: Նախաձեռնությունը ջերմորեն ողջունեց մեթոդ կաբինետի տնօրեն՝ Ալբերտ Ոսկանյանը:

Քաշքշուկը շատ էր, անհրաժեշտ էր որևէ այլ հիմնարկ, որը սիմվոլիկ գումար փոխանցելով տպարանին, երաշխավորեր տպագրությունը: Այդ հարցում օգնեց հայրս Կառլեն Գևորգի Շագոյանը «Հայգյուղտնտեխնիկայի» երեք հիմնադիրներից մեկն ու երկարամյա կառավարիչը: Դեռ 1994-ից պատրաստ էր ձեռագիր աշխատությունս՝ «Դասախոսություններ երաժշտական ձև առարկայից Բ. Վ. Սակկիլարիի մեթոդիկայի հիմունքներով», գրախոսներն էին՝ մասնագիտությանս ղեկավարը, արվեստագիտության դոկտոր Ն. Կ. Թահմիզյանը և Ա. Բ. Սմբատյանը: Գիրքն արդեն հանձնված էր տպարանին, փոխանցված էր նաև տպագրության համար անհրաժեշտ երաշխավորող գումարը: Սակայն, որպեսզի չձգձգվի ամսագրի տպագրությունը, հայրս խորհուրդ տվեց դադարեցնել գրքիս լույս ընծայումը. «Գրքի պատասխանատուն միայն դու ես, իսկ ամսագիրը առավել կարևոր է, որովհետև քո դասախոսները, ընկերները 20 հեղինակներ քեզ վստահել են: Դա պետք է առաջինն իրականացնես»:

Ծնողներս հիվանդանոցում էին, հայրս իր մայրամուտի ամիսներն էր ապրում, սակայն ոգևորվեց և ինձ էլ քաջալերեց, որ չերկմտեմ, և գնամ ուղիղ ռեկտորին տեղյակ պահեմ, պահանջվող բոլոր փաստաթղթերի մասին: Հայրիկիս ասացի, որ ամսագիրը դեռ անուն չունի, և հետո, ռեկտորը տեղում չի լինի: Նա խիստ պատասխանեց. «Սմբատյանն աշխատող մարդ է տեղում կլինի, որ հենց հիմա գնաս տպարանի տնօրենին էլ կգտնես: Հետո հարցրեց, ինչ անունով երաժշտական ամսագրեր ունեն՞ք»: *Ես սկսեցի ռուսական ամսագրերի անունները թվարկել, անմիջապես հարցրեց,- «Իսկ հայկակա՞ն»,- ասացի՝ չկա: Անմիջապես առաջարկեց.* «Երաժշտական Հայաստան» անվանի, հետո կխորհրդակցեք»:

Այդպես էլ ստացվեց, հայրիկիս խոսքերը իրականություն դարձան: Տպարանի տնօրենը տեղում էր: Ամսագրի թղթապանակն ուսումնասիրեց ու հարցրեց ամսագրի անունը: Առանց երկնչելու, վստահ պատասխանեցի: Սակայն պարզվեց գրավոր տեղեկանք էր պետք ռեկտորից, այն մասին, որ ինձ է վստահված նման նախաձեռնությունը:

Ճանապարհվեցի Կոնսերվատորիա, ռեկտորը տեղում էր: Լսելով ամսագրի մասին մտահղացումը, հավանեց անվանումը, իսկ տպագրելու հնարավորության մասին իմանալով ոգևորվեց, անմիջապես Շուշանիկ Մեհրաբյանին հանձնարարեց գրությունը պատրաստել:

Գրությունն ուրախությամբ հանձնեցի տպարան, մտքում հրճվելով, որ հաջողված սկիզբ է: Գիտեի, որ հայրիկս հեռատես է, սակայն զարմացած էի, որ կանխատեսումները րոպեների ընթացքում իրականություն դարձան: Անմիջապես վերադարձա հիվանդանոց, արդեն երեկո էր, հայրս ու մայրս իմ ուրախությունը ոգևորությամբ ու հպարտությամբ կիսեցին:

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Սվետլանա Կորյունի Սարգսյանի՝
25.10.2021 թ., ընդունվել է տպագրության՝ 21.11.2021 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 20.10.2021 թ.

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

Առաջին համարը հիմնադրելու պահից մինչև լույս տեսնելը տևեց 2 տարի 1996 թվականի աշնանից մինչև 1998 թվականի օգոստոսը: Յավոք, 1997-ի մարտից հայրս ինձ հետ չէր:

Պետք է փաստել, պարոն Ա. Բ. Սմբատյանի խմբագրական գործից քաջատեղյակությունը, հրատարակչական ու տպագրական ընթացքին մեծապես նպաստեցին: Հերթական թղթագրությունների համար երբեք չէր սպասեցնում իր ընդունարանում, որտեղ էլ, որ գտնվեր թե՛ Մշակույթի նախարարությունում, թե՛ կոնսերվատորիայում, անմիջապես համապատասխան գրությունը պահանջված ժամկետներում ներկայացվում էր:

Այն ժամանակ գործող կարգի համաձայն հարկավոր էր, որ հրատարակել ամսագրի մի քանի համար՝ պաբերականության հնարավորությունն ապահովելու համար: Մեր ամսագրի դեպքում նույնպես 4 հերթական համարների լույսընծայումից հետո «Երաժշտական Հայաստան»-ը 5-րդ համարից սկսած ստացավ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից հաստատված հավաստագիր, որպես պաշտոնապես ՀՀ-ում գրանցված պարբերական մամուլ:

Առանձնակի հիշատակման են արժանի, բոլոր նրանք, ովքեր ամսագրի կայացման առաջին քայլերին առակցեցին իրենց բարիացակամ վերաբերմունքով և օգնելու պատրաստակամությամբ: Նրանցից մեկը նախարարության Մամուլի բաժնի վարիչ, պարոն Սերգեյ Կարապետյանն էր:

Այստեղ, պետք է հիշատակել նաև ՀՀ Ազգային գրապալատի վաստակաշատ աշխատակցուհի, լուսահոգի Սվետլանա Սարգսյանին՝ գիտելիքներով հարուստ, բարձր մասնագիտական պատրաստվածության տեր, մշակութասեր անձնավորությանը, ով իր խորհուրդներով մեծապես նպաստեց ամսագրի, այնուհետև նաև «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադրմանը: Աշխատանքին նպաստում էր, լուրջ բովանդակությանն ու գիտական պահանջներին խստիվ հետևելը շնորհիվ, այն հանգամանքի, որ Մոսկվայի կոնսերվատորիայի հայցորդ էի, մշտապես հետևում էի երաժշտագիտության առաջխաղացմանը և ԲՈՀ-ի պահանջների անընդմեջ փոփոխություններին, որոնք պահպանվում էին և ամսագրում:

Այդ լուրջ մոտեցումն աննկատ չմնաց և ԲՈՀ-ի (այժմ ԲՈԿ) նախագահի տեղակալ, արվեստի գիտակ, պայծառ անձնավորություն, բանասիրական գիտությունների դոկտոր՝ Լիլիթ Արզումանյանի առաջարկով այն գրանցվեց, ներառյալ դոկտորական ատենախոսությունների արդյունքների տպագրման իրավունքով: Այն միջազգային նշանակության, երաժշտարվեստը լուսաբանող միակ ամսագիրն էր այդ թվականներին, 1994 թվականին արդեն փակվել էր «Սովետական արվեստ» ամսագիրը: Հետագայում գրանցվեց և «Հայ արվեստ»-ը, որը արվեստի բոլոր ճյուղերն է ներգրավում, եռամսյա հանդես էր, ցավոք միայն 2002-2008 թվականներին ընթացքում գործեց: «Երաժշտական Հայաստան»-ը հանրապետությունում 2-րդը, ՀՀ Գյուղակադեմիայի ամսագրից հետո, գրանցվեց միջազգային ISSN համակարգում, ՀՀ Ազգային գրապալատի՝ Նախագահ Հովհաննես Բեքմեզյանի շնորհիվ:

Պետք է անպայման նշել, որ վարչական բոլոր օղակներում, թե՛ պաշտոնյա և թե՛ պարզապես աշխատակիցներն ուրախությամբ և հիարցմունքով էին մոտենում ու աջակցում երաժշտական մամուլի ստեղծմանը: Ներգրավվում է Սկոպուս համակարգում, գործընթացում է՝ 4-րդ մակարդակում:

Ամսագրի բոլոր առաջխաղացումներով և նորություններով, հետաքրքրված բոլոր առումներով շարունակում ենք այն զարգացնել: 2019 թ. սեպտեմբերի 23-27-ը մասնակցել է տողերիս հեղինակը ՀՀ ԳԱԱ-ում կազմակերպած՝ Գիտաչափությունը գործնականում Համակարգչային գիտություն և տեղեկատվական տեխնոլոգիաների 12-րդ միջազգային գիտաժողովի սեմինարին:

Մենք միակ արվեստ ներկայացնող գիտական ամսագիրն էինք, որ ներգրավված էինք միջազգային համակարգում և նույնիսկ բարձրաձայնվեց այդ մասին և ծափողջույններով ընդունվեց, կային նույնիսկ բնագիտական բնագավառի այլ ամսագրեր, որոնք ներգրավված չէին որևէ համակարգերում և գիտաժողովին նոր ծանոթանում էին: Պետք է նշել, որ հայ մտքի մաթեմատիկական գիտությունների բոլոր ամսագրերը առկա են և երկար տարիներ էին, որ կայացած են համաշխարհային գիտաչափության տարբեր համակարգերում: Իրականում դրանց բարձր մակարդակի արդյունքներն էին, որ նման գիտաժողովներ են տեղի ունենում Երևանում 2014 թվականից սկսած, իսկ աշխարհում նույնպես 21 տարի է, որ հետազոտվում է տես՝ csiam.sci.am (այստեղ՝ մեր առկայությունը կա Ամսագրերի բաժնում և Ամսագրերի գիտական բնագավառների դասակարգմամբ 2003 թ. մեթոդաբանությամբ): Կոնսերվատորիայի կայքի վերակառուցման պատճառով է միայն, որ 2017 թվականի տվյալներով ArmJIF՝ CSIAM կողմից հաշվարկվող ամսագրերի Ազդեցության գործոնը ASCI հիման վրա առկա է 0.58 արդյունքով (նախորդ տարիներինը՝ 2014 թ. ՝ - 0.017, 2015 թ. ՝ - 0.02, 2016 թ. ՝ - 0.047) (1.):

Ամսագրի 3-րդ և 4-րդ համարները նվիրվել էին Հայաստանում Քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700 ամյակին, իսկ 2002 թվականի ամսագրային համարներն ամբողջությամբ նվիրվեցին Կոնսերվատորիայի 80-ամյակին, այնուհետև լույս տեսան 90- և 95-ամյակներին նվիրված համարները, 2019-ի երկու համարները Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանն էին ամփոփում: Այժմ 2021-ի երկու համարներն էլ (վերջինը կրկնակի անգամ ծավալուն) նվիրվում են ԵՊԿ հիմնադրման 100-ամյակին: Ամսագրի առաջընթացին ջերմորեն մասնակցում է կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական կազմը, նրանցից շատերն ընդգրկված են խմբագրական խորհրդում: Վերջին երկու տարիներին ամսագրի գիտական խորհրդականն է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Սվետլանա Սարգսյանը, որի տեղին և ժամանակին արված խորհուրդները բարձրացրել են ամսագրի վարկանիշը: 2018-ից չորս տարի է ղեկավարվում է այն գիտության գծով պրոռեկտոր արվեստագիտության թեկնածու և ԵՊԿ դոցենտ Ծովինար Հրայրի Մովսիսյանի կողմից՝ որպես գիտական խմբագիր:

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ
YEREVAN STATE CONSERVATORY AFTER KOMITAS
ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ ИМЕНИ КОМИТАСА

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

Շնորհակալություն եմ հայտնում պրոֆեսորներին, որոնց դասարաններում ես կրթություն եմ ստացել, իսկ այնուհետև պրոֆեսիոնալ խմբագրական գործունեության ընթացքում առնչվել եմ: Նրանց վստահության և իմ կարողություններին՝ առաջին հերթին նրանք ապավինեցին: Երկու տարի ամսագրի 1-ին համարի շուրջ 20 հոդված ձեռքիս էին և ոչ մի հեղինակ, երբեք չդժգոհեց: Բոլորը քաջալերում էին և համբերատարությամբ ինձ հետ միասին սպասում: Անմոռանալի է մի դրվագ, երբ առաջին անգամ ամսագիրը ձեռքիս կոնսերվատորիայի մուտքի մոտ հանդիպեցի պատվարժան հոդվածագրերից մեկին: Նա երբ տեսավ, համբուրեց ամսագիրը և կիսելով հուզմունքս ասաց. «Վերջապես մեր երանաշնորհ մեծերի երազանքը կատարվեց»:

Երբևէ մոռանալու չէ նաև մեր երաժիշտների՝ պրոֆեսորների հոգատարությունը, նվիրվածությունը, համբերատարությունը, սերը հարգանքը մեկը մյուսի աշխատանքի, իրենց հոդվածների նկատմամբ: Մարգարիտ Բրուտյանի քաջալերումները և պատգամները, Արաքսի Սարյանի առաջին անգամ արտաբերած վստահությունը. «Ես հոգնել եմ, դու՛ք՝ երիտասարդներդ ստեղծեք, հենց դու», *1996-ի ձմռանն էր և իր հոդվածը վստահեց ինձ, Իրինա Տիգրանովան հանձնեց Բուենոս Այրեսից ուղարկած Ռուբեն Տերտերյանի հոդվածը:*

Անհրաժեշտ է նաև նշել առաջին համարի հոդվածագրերի անունները, որովհետև նրանց յուրաքանչյուր հոդվածի հետ մի հիշողություն կա: Հայտնել շնորհակալություն առաջին հերթին մտավորական լինելու համար. Արաքսի Սարյան, Հենրիկ Սմբատյան, Դանիել Երաժիշտ, Ժաննա Զուրաբյան, Մանուկ Մանուկյան, Մարգարիտ Ռուխկյան, Ռուբեն Տերտերյան, Մարինա Մավիսակալյան, Վերգինե Սարդարյան, Վալենտին Թովմասյան և Խորեն Պալյան, Կարինե Ջաղացպանյան, Լիլիթ Եփրեմյան, Մհեր Նավոյան, Ստեփան Բաբաթոբոսյան, Անահիտ Գրիգորյան, Լիանա Ավետիսյան, ուսանողներ՝ Եվա Դիլանյան, Գոհար Ալյան:

Հոդվածներով իրենց ակտիվ մասնակցությունն են բերում Սփյուռքի երաժիշտները, նպաստելով, որպեսզի ամսագիրը տարածվի իրենց գաղթօջախներում՝ Հայկ Ավագյան՝ Կահիրե, ազնվագույն, ցավոք լուսահոգի Գրիգոր Փիթեմեանը՝ Նյու-Յորք, Սիրանուշ և Գրիգոր Հակոբյանները՝ Լոս-Անջելես, Վաչե Պարսումյան Դրազարկ հրատարակչություն և Ջիա Այվազյան՝ Լոս-Անջելես, Նրանք ոչ միայն նպաստում են ամսագրի տարածմանը և այլն բաժանորդներ էին ներգրավում:

Ամսագիրը լույս է տեսնում բազմալեզու՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և հարկ եղած դեպքում ցանկացած լեզվով՝ բնագրով: Այն տարածվում է աշխարհի բազմաթիվ հայագիտական ամբիոններում և այլ հաստատություններում, ինչպես՝ Ռուսաստանում (Մոսկվայի և Ս.Պետերբուրգի կոնսերվատորիաներում, "Музыкальная Академия", "Музыкальная жизнь" ամսագրերի խմբագրություններում), ԱՄՆ-ում (Լոս-Անջելեսի Նահանգային և քաղաքային համալսարանների հայագիտական ամբիոններում), Կանադայում, Արգենտինայում, Լիբանանում, Իրանում, Ավստրիայում, Գերմանիայում, Խորվաթիայում, Հունաստանում, Վրաստանում, Ֆրանսիայի «Նոր հառաջ» և Բուլղարիայի հայկական թերթերի խմբագրություններում: Ամսագիրը նվիրվել է Իտալիայի սուրբ Ղազար կղզու Մխիթարյանների միաբանության գրադարանին, Հայր Պողոս-Լևոն Զէքիյանին՝ ով ամսագրի առաջին բաժանորդն է եղել Հայր Լևոն Զեքեյան, ինչպես ինքը փաստեց, որպեսզի խթանի տարածմանը իր օրհնությամբ և ձեռամբ: Միլանի հայագիտական ամբիոնին, նաև նրա ղեկավարած «Պո Արաքս» կրթական հաստատությանը, Ռուբեն Գալչյանին (Լոնդոն, այժմ՝ ԵՊԿ-ի բարեկամների հիմնադրամի հոգաբարձու) Մշակութային միությանը, Հունգարիայի հայկական տան գրադարանին, Իտալիայի, Իսպանիայի ազգային գրադարաններին, անհատ գործիչների և այլն:

«Երաժշտական Հայաստան»-ը որպես առաջին մասնագիտական ամսագիր» վերտառությամբ ուղերձում (ամսագրի 5-րդ հոբելյանական համարում) մեծանուն ֆոլկլորագետ, ԵՊԿ պրոֆեսոր, երաժշտագետ-տեսաբան, լուսահոգի Մարգարիտ Բրուտյանը մասնավորապես նշել է.

«Երաժշտական Հայաստան»-ը վաղուց սպասված ամսագիր է, ահա թե ինչու՞:

Մենք ունեինք «Սովետական արվեստ»ը, բայց այն ամսագիր էր ընդհանուր՝ բոլոր արվեստներին նվիրված: «Երաժշտական Հայաստանը» միայն երաժշտական արվեստին է ծառայում, և մենք դրա կարիքը վաղուց ունեինք: Վերնագիրը ճիշտ է ընտրված, քանի որ արծարծվում է Հայաստանի երաժշտական, նաև ամբողջ երաժշտական կյանքը՝ համերգային, երաժշտագիտական միտք, Սփյուռքի երաժշտություն (վերջինս ակտիվորեն ծառայում է Հայրենիք-Սփյուռք կապի ամրապնդմանը): ...«Երաժշտական Հայաստան»-ը մասնագետների և՛ լայն ընթերցողի համար է (հրապարակախոսական, տեղեկատվական, գրախոսություն, հարցազրույց և այլ տիպի հոդվածներով), այսինքն՝ ընդգրկուն է, կա ընտրության հնարավորություն:

...Խրախուսելի է լեզվի ընտրությունը՝ ռուսերեն, անգլերեն և ըստ ցանկության նաև այլ լեզուներ: Անցյալը կապվում է ներկայի հետ: Հոգևոր և ժամանակակից երաժշտությունը լուսաբանվում է հավասարապես: Գովելի է սերունդների համատեղումը. ուսանողներին հնարավորություն է տրվում հրատարակվել իրենց դասավանդող պրոֆեսորների կողքին:

Ճաշակով է իրականացված ամսագրի ձևավորումը՝ կիրթ, ճոխ, բայց և զուսպ, հայեցի մտածողությամբ, որով ևս պայմանավորված է դրա հաջողությունը: Զգտում կա ներկայացնել երաժշտության վերջին շրջանի նոր տեսակները (ոչ դասական): Բովանդակությամբ շատ հարուստ է:

Կարևոր է այն, որ Ռոմանոս Մելիքյանից սկսած մեր մեծերը ցանկացել են. կոնսերվատորիան կապված լինի ժողովրդի հետ, ապա ինչպե՞ս, եթե ոչ ամսագրի շնորհիվ»:

Իր խոսքում հանրահայտ երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արաքսի Սարյանը գրում է.

«Սա վերջին տարիների երաժշտական հրապարակումների արժեքավոր ձեռքբերումներից է: Իսկ ամենակարևորը անհրաժեշտ և վաղուց սպասված:

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

Տարիներ է, արդեն, որ երաժշտական մեր աշխարհը մասնագիտական ամսագրի պահանջն ուներ: Այսօր այն, երաժշտագետ Գոհար Շագոյանի մեծ ջանքերով և նվիրումով իրագործվում է: «Երաժշտական Հայաստանը» բազմակողմանի ընդգրկում է ազգային երաժշտական մշակույթի արդի անցուդարձը: Այն բովանդակում է, թե՛ գիտական միտքը, թե՛ ստեղծագործական, թե՛ երաժշտական անցյալն ու այսօրը ներկայացնող իրադարձությունները, թե՛ վաստակաշատ հայ գործիչների դիմանկարները և բազում արժանի այլ տեղեկություններ: Ժողովածուն ներկայանում է մասնագիտական պատշաճ մակարդակով ու ճշգրտությամբ, ի տարբերություն մամուլում ներկայումս հեղեղված կիսագրագետ ակնարկների և տեղեկությունների:

Հեղինակավոր է ամսագրի խմբագրական խորհուրդը, որի հետ լրջորեն հաշվի է նստում մեծ խանդավառությամբ գործը ղեկավարող Գոհար Շագոյանը:

Նման գեղեցիկ ու անհրաժեշտ նախաձեռնությանը, հիրավի, անհրաժեշտ է իրական աջակցություն»:

Այսպես ավանդույթ դարձավ, որ ամսագրի տիտղոսաթերթին մեր մեծերն իրենց խոսքով և քաջալերանքով հանդես գան, ինչը շարունակվում է առ այսօր: Նրանց թվում են՝ Էդվարդ Միրզոյանը, արվեստագիտության դոկտոր Մարկ Արանովսկին (ՌԴ), Սվետլանա Սարգսյանը, Սվետլանա Նավասարդյանը, ճարտարապետ՝ Սաշուր Քալաշյանը, ակադեմիկոսներ՝ Սերգեյ Համբարձումյանը, Ռադիկ Մարտիրոսյանը, Տ. Նավասարդ Արքեպս. Կճոյանը, ՀՀ-ում Ռումինիայի հանրապետության Արտակարգ և լիազոր Դեսպան Նիկոլայ Յորդակեն և ուրիշներ՝

2012 թ., ամբողջ աշխարհը նշում էր Երևանը՝ համաշխարհային գրքի մայրաքաղաքի և Հայոց գրատպության 500-ամյակը: Գաֆեսյան կենտրոնում կազմակերպված ցուցադրության 1-ին տաղավարը հատկացված էր «Երաժշտական Հայաստան» ամսագրին, քանի որ նրա կազմը և անունը արտացոլում էին մեր մեծանուն մտավորականներին և Հայաստանը: Այն մեծ արձագանք ունեցավ և, որի շնորհիվ ձեռք բերեցինք ազնվագույն բարեկամի՝ ի դեմս Միլանի կոնսերվատորիայի մատենագետ՝ Ֆ. Մասիմոյի, ով Հանրապետական երաժշտական գրադարանի փոխտնօրեն՝ Ռաֆայել Ղազարյանի աշխատասիրությամբ «Երաժշտական Հայաստան»-ի 60-անուն հոդված մատենագիտացվեցին և նեգրավվեցին Իտալիայի RILM (Report of International Literatury of Music) համակարգում (2. էջ 2):

Առաջին համարի լույս ընծայման առիթով «Շարական» ամսագրի գեղարվեստական ղեկավար, դիրիժոր, երաժշտագետ Դանիել Երաժիշտն (Գրիգոր Դանիելյան) առաջինը լայն հանրությանը ներկայացրեց «Հայաստանի Հանրապետություն» (3.) առաջատար պետական թերթում «Երաժշտական Հայաստան» ամսագիրը, հոդվածը վերնագրելով Արամ Խաչատրյանի խոսքերով, որոնք այն ժամանակ նախաձեռնողներին շատ ամպագոռգոռ թվացին. «Ստեղծագործելու համար տաղանդ է պետք, իսկ հրատարակելու համար՝ հանճար» (3.): ԵՊԿ 90-ամյակին նվիրված ամսագրում արվեստագիտության դոկտոր Մարգարիտ Ռուխկյանը ամսագրի գործունեության գնահատականը տվեց «Երաժշտական Հայաստանի տարեգրությունը» վերտառությամբ (4. էջ 25):

Հուզիչ էր, երբ Սփյուռքն արձագանքեց այս հոդվածից հետո: Զաքար Քեշիշյանը «Ազդակ»-ում տեղեկություն տպագրեց, այնուհետև շատ հետաքրքիր հոդվածով՝ Սփյուռքում գործող XX դարասկզբի երաժշտարվեստի թերթերի կարճատև գոյության մասին հոդված գրեց «Ակոս» շաբաթաթերթում, այն ժամանակ Հայաստանյան ներկայացուցիչ՝ Տիրան Լօքմագէոզյանը:

Հետագայում, տողերիս հեղինակն իր ստեղծված հետևյալ երաժշտական մասնագիտական մամուլի համար, Հայաստանում, Արցախում և Սփյուռքում, մշակույթի ասպարեզում ունեցած բեղուն գործունեության համար արժանացել 2019-ին ՀՀ ԱԳ AAD (Armenia Artzakh Diaspora) կայքի Պատվորգին և ոսկեջրյա նշանին:

Գոհար Կաղլենի Շագոյան - երաժշտագետ, դասախոս, խմբագիր և հրատարակիչ, եղել է Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվ. պետական կոնսերվատորիայի հայցորդ՝ 1988-1992 թթ.՝ ղեկավար Մ. Ե. Տարականով, 2001-2003 թթ.՝ ղեկավար՝ Ե. Բ. Դոլինսկայա, Փարիզի գիտությունների միջազգային «Արարատ» ակադեմիայի թղթակից ակադեմիկոս է (2017-ից), Հայ մասնագիտական երաժշտական մամուլի հիմնադիր՝ «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադիր-գլխավոր խմբագիր (1996-ից), «ԵՊԿ-հրատարակչության» հիմնադիր-տնօրեն (2004-ից), (2019-ից՝ վարիչ) և գլխավոր խմբագիր (2003-ից), «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիր, թողարկման պատասխանատու խմբագիր (2005-ից), ԵՊԿ Ուսումնամեթոդական աշխատանքների ժողովածուի հիմնադիր, կազմող, խմբագիր (2004-ից): 2017-ից ՀԿՄ «Հայ Կոմպոզիտոր» ամսագրի հիմնադիր-պատասխանատու քարտուղար:

ՕԳՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. http://csiam.sci.am/am/655C96G3J
2. *Шагоян Г. К., Первый музыкальный журнал* //Музыкальная Армения, #1 (50) 2016. *Shagoyan G. K.,* Pervyj muzikal'nyj jurnal, //Muzykal'naya Armeniya, #1 (50) 2016.
3. *Դանիել Երաժիշտ,* «Ստեղծագործելու համար տաղանդ է պետք, իսկ հրատարակելու համար' հանճար», //Հայաստանի Հանրապետություն, 12. 2. 2005, թիվ 25 (3641): *Daniel Yerazhisht,* "Steghtsagortselu hamar taghand e petq, isk hratarakelu hamar handchar", //Hayastani Hanrapetuthyun., 12. 2. 2005, tiv 25 (3641).
4. *Рухкян М. А.,* Летопись музыкальной Армении, //Музыкальная Армения, 1-2 (44-45) 2013. *Rukhkyan M. A.,* Letopi' Muzykal'noj Armenii, //Muzykal'naya Armeniya, #1 (50) 2016.
5. *Լօքմագէոզեաս S,* //Ակոս, *Loqmageozyan T.,* Mu ., //Akos,

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

Բանալի-բառեր. "Երաժշտական Հայաստան", հիմնադիր, խմբագիր, տնօրեն, գիտական, ուսումնամեթոդական, ամսագիր:

Ключевые слова: "Музыкальная Армения", основатель, главный редактор, директор, научный, учебно-методический, журнал.

Keywords: "Musical Armenia", Faunder-Eclitor-in-chief, Director, Scientific, teaching-methodological, journal.

Տեղեկություններ հեղինակի մասին. ՇԱԳՈՅԱՆ ԳՈՀԱՐ ԿԱՌԼԵՆԻ (ծ. 29.4.1958 թ. ք. Երևան), երաժշտագետ, հրատարակիչ, ռադիոլրագրող: Ավարտել է՝ ԵՊԿ երաժշտագիտ. բաժինը, (1983, պրոֆ., արվեստագիտ. դոկտոր Ն. Կ. Թահմիզյան, 1988-ին դիպլոմ. աշխատանքը՝ «Գուրգեն Ալեմշահ» մենագրություն, արժանացել է ՀՀ ԳԱԱ ԱԻ Պատվոգրի), Պ. Չայկովսկու անվ. ՄՊԿ-ի հայրենի, այժմ՝ ռուսական երաժշտության ամբիոնում հայցորդ (ղեկ-ներ՝ պրոֆ., արվեստագիտ. դոկտորներ Մ. Եվ. Տարականով՝ 1988-1989 թթ., նրա մահից հետո՝ Ե. Բ. Դոլինսկայա՝ 2002-2004 թթ.): 1987-ին անցել է նույն կոնսերվատորիայում վերավորակավորման 3-ամյա ստաժավորումը: 1979-1981 թթ. գրաբարի դասընթաց է անցել ԵՊՀ (1 տարի ազատ ունկնդիր) և ԵՊԿ (իր նախաձեռնությամբ այնուհետև Խ. Պալյանը հրավիրվել է ԵՊԿ, 2 տարի, գերազանց, սերտիֆիկատ): Հիմնադրել է՝ 1996-ից և 1998-ին լույս է տեսել «Երաժշտական Հայաստան» միջազգ. գիտ. ամսագիրը հիմնադիր-գլխավոր խմբագիր (ռեկտոր, պրոֆ., Ա. Բ. Սմբատյան՝ հիմնադիր-տնօրեն), գրանցված ԲՈկ-ում, (ընդունելի դոկտորականների ատենախոսությունների ցանկում 2003 թ-ից): Աշխատում է՝ ԵՊԿ-ում 2000-ից, 1999-ից «Երաժշտական Հայաստան» ամսագրի բարեկամների ակումբի (ղեկավար), 2004-ից առ այսօր Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի «ԵՊԿ հրատարակչության» տնօրեն (2019-ից՝ վարիչ) և գլխավոր խմբագիր (Ս. Գ. Սարաջյան՝ հրատարակչական խորհրդի հիմնադիր-նախագահ): 2004-2012 թթ. ԵՊԿ դասախոսների ուսումնամեթոդ. հոդվածների ժողովածու Պրակ 1-7 (2004-2010, հիմնադիրներ՝ կազմող և խմբագիր, Ս. Գ. Սարաջյան՝ խմբագր. խորհրդի նախագահ: 2005-ից «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիր և թողարկման պատասխանատու: ՀՀ Ժուռնալիստների (1995) և ՀՀ Կոմպոզիտորների (1997) միությունների անդամ: Դասավանդել է՝ 1994-1985 թթ. Խ. Աբովյանի անվ. հայկ. մանկավարժ. համալսարանի Գեղարվեստ. դաստիարակության ֆակուլտետի Երաժշտության տեսության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում՝ դասախոս, (նաև 1988-1990 ամբիոնի վարիչի տեղակալ հաս. հիմունքներով): 2004-2008 թթ. «Գլաձոր» համալսարանի լրագրության ամբիոնի «Երաժշտության համընդհանուր պատմություն» դասընթացի կազմող և դասախոս: Աշխատել է. 1999-1994 թթ. ՀՀ Ազգային ռադիոյի երաժշտ. գլխ. խմբագրությունում խմբագիր: Համահեղինակ է գրքի՝ Սարաջյանի անվ. երաժշտական դպրոց, Եր., «Առերեսում»-Անի, 2002 թ., բազմաթիվ հոդվածների՝ ժողովածուներում՝ "Некоторые теоретические вопросы оперы Авета Тертеряна "Землетрясение", /Авет Тертерян Международная конференция фестиваль, Традиции и новаторство. Ер.: Арчеш, 2004, С. 84-94. Армянские мысли-те-ли о социологическом музыкальном восприятии, /Հումանիտար գիտությունների արդի հիմնախնդիրները Հայաստանում, «Գլաձոր» կառավարման համալսարան, Ե., Նոյան Տապան, 2005 էջ 335-343: Этапы эволюции Армянской профессиональной музыки для детей и юношества. /նույն տեղում, Ե., Նոյան Տապան, 2006 թ.: Հայկական այբուբենի հավերժականության պատումը Ա. Տերտերյանի 6-րդ սիմֆոնիայում, /ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Ջահուկյանական ընթերցումներ-2007, հանրապետ. գիտական նստաշրջանի զեկուցումներ (Ե., ապրիլի 3-4, 2007թ.), Ե., «Վան Արյան» 2007, 142-147 էջ: Ժողովածուների կազմող՝ շուրջ 50 գիտ. հոդվածի և թեզերի ամսագրերում, շուրջ 150 հոդված թերթերում, Հանրագիտարաններում՝ հեղինակային և խմբագրական աշխատանք՝Большая Российская Энциклопедия, Москва,, ՀՀՀ 4-րդ հատորում, Հայ երաժշտության հանրագիտարանի համակարգող մասնագետ, Հայուհի: Մոսկվայի «Մուզիկալնայա ակադեմիա» ամսագրում N 1 (2005) Հայաստանի մասին տպագրված հոդվածաշարի կազմակերպիչ: Հեղինակ է 121 ռադիո հաղորդումների, շուրջ 5 հեղինակային հաղորդաշարերի և միայն նա անցկացրել է երաժշտ. 5 շաբաթ՝ նվիրված 5 կոմպոզիտորի:

Сведения об авторе: ШАГОЯН ГОАР КАРЛЕНОВНА (род. 29.4.1958 г. Ереван) - музыковед, издатель, член Союзов журналистов (1995) и композиторов (1997) РА. Окончила музыковед. отд. ЕГК (1983, рук., проф. докт. искусств. Н. К. Такмизян), дипломная работа - монография "Гурген Алемшах" получила Почетную грамоту ИИ НАН РА (1988); проходила курсы грабара (1979-1981) в ЕГУ и ЕГК (проф. Х. Палян, по ее инициативе его пригласили в ЕГК для преподавания дисциплины "Грабар"), получив сертификат с отличием. Соискатель МГК им. П. Чайковского (рук. проф., д-р искусств. М. Е. Тараканов 1988-1992, проф., д-р искусств Е. Б. Долинская 2002-2004, по причине Арцахской войны). Проходила курсы-стажировку в МГК им. Чайковского (1987, 3 месяца), курсы интенсивного обучения англ. яз. в Пед. инст. им. Абовяна (1986). В 1998 г. основала международный научный журнал "Музыкальная Армения"- основатель-главный редактор (основатель-директор, проф., ректор А.Б.Смбатян, утвержд. ВАКом /принятых списков докторских диссертаций с 2003 г./). С 2000 г. продолжает деятельность в ЕГК. В 1999 г. основала и руководила клубом Друзей журнала "Музыкальная Армения" (на общест. началах). С 2004 г. по настоящее время основатель— директор "Издательства ЕГК" (основатели - председатель издательского совета, ректор ЕГК С. В. Сараджян и Ш.). С 2004 - до сегдняшнего дня Сборник методических статей, (сос- т. и ред. Ш.). С 2005 основатель и отв. за выпуск ежемесячной профессиональной газеты "Еражишт" ("Музыкант"). Преподавала: 1994-1985 - Пед. институт им. Абовяна, факультет художественного воспитания, кафедра теории музыки и методики преподавания, преподаватель теоретических дисциплин; 1988-1990 - зам. зав. каф. (на обществ, началах). С 2004-2008 - препод. Университета Управления "Гладзор", кафедра журналистики, дисциплина "Всеобщая история музыки". Работала на национальном радио РА редактором Главной редакции муз. программ (1999-1994). Автор: "Сараджевская муз. школа" (соавтор), Ер.: Арересум-Ани, 2002, с 1998; многочисленных научных статей в сборниках — "Некоторые теоретические вопросы оперы Авета Тертеряна "Землетрясение", Авет Тертерян Международная конференция-фестиваль /Традиции и новаторство. (на рус. яз.) Ер.: Арчеш, 2004, С. 84-94; Армянские мыслители о социологическом музыкальном восприятии./Современные проблемы гуманитарных наук в Армении, Университет Управления "Гладзор", (на рус. яз.) Ер.: Ноян Тапан, 2005 С. 335-343; Сказ вечности армянского алфавита в 6 симф. А. Тертеряна /Институт филологии им. Р. Ачаряна НАН РА, Джаукяновские чтения, 2007, доклады республиканской научной конференцях.

Information about the author: *SHAGOYAN GOHAR KARLEN (native town Yerevan)-musiologist, issuer, member of the union of journalists(1995) and composers(1997) of RA. Aspirant of MSC after Tchaikovsky,(leading professor doctor of arts, M. E. Tarakanov and E.B. Dolinskaya 1988-1989, 2002-2004) 3 month's training courses in MSC after P. Tchaikovsky(1987). Intensive courses of English in State University after Abovyan(1987). Has graduated from the department of music of YSC, (leading professor doctor of arts N.K. Takmizyan (1983)). Diploma thesis monograph "Gurgen Alemshakh" has received certificate of honor 1988). She took courses of Grabar (1979-1981) in YSU and YSC receiving certificate with distinction. Has Graduated theoretical department of Music College after R. Melikyan. In 1998 has established scientific journal "Musical Armenia" establisher-editor in chief. (Establisher, headmaster, professor, Rector A.B. Smbatyan). From 2000 continues her activity in YSC. In 1999 has established and lead the club of friends of the journal "Musical Armenia" in public beginnings. From 2004 till now is the headmaster of publishing office of YSC (establishes chairman of the publishing council, rector of YSC S. V. Saradzhyan and Sh.). From 2004 to 2012 collection of methodological articles, edition 1-7. (2004-2010)compiler and editor Sh.. Chairman of editors boards. Rector, professor S. G. Saradzhyan). Messenger of YSC after Komitas (educational and methodological articles 8-9. 1/2011-12 educational and methodological articles 8-9.2. 2011-2012 Chairman of editors boards. rector, professor Sh. H. Shahinyan). From 2005 establisher and accountable for editions of monthly journal "Musician". Teaching activities: 1994-1985 State University after Abovyan department of art education. Chair of theory of music and mythology of teaching, lecturer 1988-1990 Deputy Head of the Department. 28 author's aricles and 34 editorial works, in the Big Russian Encyclopedia. Moscow (R. Amirkhanyan) Russian Musical Encyclopedia (R. Amirkhanyan, V. Achemian, I. Arbatov, A. Achemian, T. Arazyan),"We"(menq) "Armenian girl" in armnian ecyclopedias. 121 radiprograms from which 54 about Armenian composers, 5 author's cycles (67 broadcastc first time in radio of RA, week of music of composers of Armenia" of 5 authors) international concerts in Yerevan, Armenia. Organizer of the article series about Armenia published in the Moscw Musical Academy journal (N 1, 2005).Shagoyan make opening speeches in concerts, and reports in the international and republican conferences.*

Резюме

Музыковед, основатель-главный редактор журнала "Музыкальная Армения" *Гоар Карленовна Шагоян.- "К 25-летию журнала "Музыкальная Армения".*

Статья посвящена 25-летнему юбилею журнала "Музыкальная Армения". Автором идеи создания жур - нала "Музыкальная Армения" стала музыковед Г. К. Шагоян, которую поддержал тогдашний ректор консерватории Армен Смбатян. Журнал стал выходить в свет четыре раза в год (ныне - два раза) и быстро приобрел свое лицо, стал вестником текущих событий. Этой линии он придерживается и сейчас. Сегодня жур - нал представляет из себя неделимое звено всей музыкальной жизни Армении, стремясь запечатлеть наиболее яркие события не только армянской, но и мировой му - зыкальной культуры. В журнале находят место статьи и начинающих музыковедов, аспирантов ЕГК, а также работы исполнителей, доцентов консерватории. Журнал претендует на знания в разных областях музыки — здесь отражены джаз и популярная музыка, народная музыка и исследования в области фольклора. Особое внимание уделяется фотоматериалам.

Summary

Musicologist, Founder-Editor-in-chief Musical Armenia *Gohar Karlen Shagoyan. - "Chronicle of the Journal "Musical Armenia"".*

Yerevan State Conservatory after Komitas already had a great history, great tradition of music education, when appeard the idea of creating a journal "Musical Armenia". The author of this idea is a graduate of theoretical faculty of YSC Gohar Shaghoyan, who at first times supported former rector of the Conservatory, Honour of Art RA, composer Armen Smbatyan. It is need to say that at first this idea seemed too brave. The most faithful principle to have many reliable friends determines the success of the work. The journal "Musical Armenia" became a kind of chronicle of events, expensive and significant in the history of Armenian music. Today journal "Musical Armenia" is an indivisible element of the whole musical life of Armenia, trying to capture the highlights not only of the Armenian but also of the world music. In the journal there are articles of the beginner musicologists, graduates of YSC which introduces readers to the range of problems of the musicology field and also the works of performers, docents of Yerevan State Conservatory demonstrating the high level of knowledge of the music history.